ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

25 ապրիլի 2024 թվականի N 607 - Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 13-Ի N 381-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածները՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի ապրիլի 13-ի «Հայաստանի Հանրապետության պետական գանձապետական կարճաժամկետ պարտատոմսերի, միջնաժամկետ և երկարաժամկետ արժեկտրոնա-յին պարտատոմսերի թողարկման, տեղաբաշխման, հետգնման, շրջանառության և մարման կարգը, Հայաստանի Հանրապետության պետական գանձապետական խնայողական արժեկտրոնային պարտատոմսերի թողարկման, տեղաբաշխման, հետգնման և մարման կարգը, գանձապետական պահառուի գործունեության կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի դեկտեմբերի 27-ի N 1580-Ն, Հայաստանի Հանրապետության կառա-վարության 2006 թվականի հոկտեմբերի 19-ի N 1606-Ն որոշումներն ուժը կորցրած

ճանաչելու մասին» N 381-Ն որոշման (այսուհետ՝ որոշում) մեջ կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները.

1) որոշման 1-ին կետի 1-ին ենթակետը «հետգնման,» բառից հետո լրացնել «փոխանակման,» բառով.

2) որոշման 1-ին կետի 3-րդ ենթակետում «:» կետադրական նշանը փոխարինել «.» կետադրական նշանով.

3) որոշման 1-ին կետը 3-րդ ենթակետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 4-րդ ենթակետով՝

«4) Հայաստանի Հանրապետության պետական գանձապետական գնաճին կցված արժեկտրոնային պարտատոմսերի թողարկման, տեղաբաշխման, շրջանառության և մարման կարգը՝ համաձայն N 4 հավելվածի:».

4) N 1 հավելվածի վերնագիրը «ՀԵՏԳՆՄԱՆ,» բառից հետո լրացնել «ՓՈԽԱՆԱԿՄԱՆ,» բառով.

5) N 1 հավելվածի 1-ին կետը «հետգնման,» բառից հետո լրացնել «փոխանակման,» բառով.

6) N 1 հավելվածի 2-րդ կետի 22-րդ ենթակետում հանել «(հավելավճար)» և «(բացասական է)» բառերը, «գնի» բառից առաջ լրացնել «գնման» բառով.

7) N 1 հավելվածի 2-րդ կետը 22-րդ ենթակետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 22.1-ին ենթակետով՝

«22.1) հավելավճար՝ պարտատոմսի անվանական արժեքի և գնման գնի տարբերություն, եթե այն բացասական է.».

8) N 1 հավելվածի 2-րդ կետի 23-րդ ենթակետը «գին՝» բառից առաջ լրացնել «գնման» բառով.

9) N 1 հավելվածի 2-րդ կետը 23-րդ ենթակետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 23.1-ին ենթակետով՝

«23.1) գին՝ գնման գնի և անվանական արժեքի հարաբերություն, որը հաշվարկվում է յուրաքանչյուր հարյուր միավոր անվանական արժեքի համար, զրո ամբողջ մեկ տասը հազարերորդական թվի ճշտությամբ՝ համաձայն թվաբանական կլորացման կանոնների.».

10) N 1 հավելվածի 2-րդ կետի 30-րդ ենթակետում «ռեպո/հակադարձ ռեպո» բառերը փոխարինել «ռեպո, հակադարձ ռեպո» բառերով.

11) N 1 հավելվածի 2-րդ կետի 32-րդ ենթակետը «հետգնման» բառից հետո լրացնել «կամ փոխանակման» բառերով, «հետգնում» բառից հետո լրացնել «կամ փոխանակում» բառերով.

12) N 1 հավելվածի 2-րդ կետի 33-րդ ենթակետը «աճուրդի» բառից հետո լրացնել «(այդ թվում՝ տեղաբաշխման լրացուցիչ աճուրդի), փոխանակման աճուրդի» բառերով.

13) N 1 հավելվածի 2-րդ կետի 34-րդ ենթակետը «յուրաքանչյուր հետգնման» բառերից հետո լրացնել «կամ փոխանակման» բառերով.

14) 1 հավելվածի 2-րդ կետը 36-րդ ենթակետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 36.1-ին ենթակետով՝

«36.1) փոխանակում՝ թողարկողի կողմից մեկ արժեթղթերի միջազգային տարբերակիչ ծածկագրով պարտատոմսի տեղաբաշխում՝ միայն մեկ այլ արժեթղթերի միջազգային տարբերակիչ ծածկագրով, ազատ կարգավիճակով պարտատոմսի հետգնման պայմանով.».

15) N 1 հավելվածի 2-րդ կետի 37-րդ ենթակետում «առք և (կամ) վաճառք.» բառերը փոխարինել «առք, վաճառք կամ փոխանակում.» բառերով.

16) N 1 հավելվածի 2-րդ կետը 41-րդ ենթակետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 41.1-ին ենթակետով՝

«41.1) փոխանակման աճուրդ՝ բազմակի գնային մեթոդով տեղաբաշխման և հետգնման աճուրդների միաժամանակյա իրականացում.».

17) N 1 հավելվածի 2-րդ կետի 42-րդ ենթակետում «և (կամ) հետգնման աճուրդ.» բառերը փոխարինել «, հետգնման աճուրդ կամ փոխանակման աճուրդ.» բառերով.

18) N 1 հավելվածի 2-րդ կետը 58-րդ ենթակետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 58.1-ին ենթակետով՝

«58.1) միջին կշռված գին՝ կնքված գործարքների միջին կշռված գին, որտեղ կշիռները ներկայացնում են կնքված գործարքների ծավալները զրո ամբողջ մեկ տասը հազարերորդական թվի ճշտությամբ՝ համաձայն թվաբանական կլորացման կանոնների.».

19) N 1 հավելվածի 5-րդ կետում «ամրագրվում» բառը փոխարինել «սահմանվում» բառով, «հրամանով» բառից հետո լրացնել «(այսուհետ՝ հրաման)» բառերը.

20) N 1 հավելվածի 6-րդ կետում «կատարելուց հետո» բառերից հետո լրացնել «՝ հրամանով սահմանված» բառերով.

21) N 1 հավելվածի 9-րդ կետում «(բացի մարումից) գործառնությունն» բառերը փոխարինել «գործառնությունը, բացի մարումից,» բառերով.

22) N 1 հավելվածի 13-րդ կետում «արժեթղթերի» բառից առաջ լրացնել «7-րդ կետով նշված» բառերով.

23) N 1 հավելվածի 15-րդ կետի 1-ին նախադասությունը «տեղաբաշխման» բառից հետո լրացնել «, փոխանակման,» բառով.

24) N 1 հավելվածի 16-րդ կետում «տվյալ թողարկման» բառերը փոխարինել «աճուրդի առարկա հանդիսացող» բառերով, «աճուրդի ամսաթիվը, եկամտաբերությունը» բառերը փոխարինել «աճուրդի ամսաթիվը, գինը կամ եկամտաբերությունը» բառերով, «(հետգնման)» բառը փոխարինել «, հետգնման կամ փոխանակման» բառերով.

25) N 1 հավելվածի 18-րդ կետի 1-ին ենթակետում «արժեթղթերի» բառից առաջ լրացնել «7-րդ կետով նշված» բառերով.

26) N 1 հավելվածի 18-րդ կետի 2-րդ ենթակետում «(հետգնման)» բառը փոխարինել «, հետգնման կամ փոխանակման» բառերով.

27) N 1 հավելվածի չորրորդ գլխի վերնագիրը «ՏԵՂԱԲԱՇԽՄԱՆ» բառից հետո լրացնել «, ՓՈԽԱՆԱԿՄԱՆ» բառով.

28) N 1 հավելվածի 26-րդ կետում «օրենքով» բառից առաջ հանել «Հայաստանի Հանրապետության» բառերը, 53-րդ կետում «օրենքի» բառից առաջ հանել «Հայաստանի Հանրապետության» բառերը.

29) N 1 հավելվածի 29-րդ կետում «քսան տոկոսը:» բառերը փոխարինել «այն մասը, որը հավասար է տեղաբաշխման լրացուցիչ աճուրդի հայտարարված ծավալի և տեղաբաշխված ծավալի հարաբերությանը:» բառերով.

30) N 1 հավելվածի 36-րդ կետը «հետ գնված» բառերից հետո լրացնել «(այդ թվում՝ նաև փոխանակման արդյունքում)» բառերով.

31) N 1 հավելվածի 36-րդ կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 36.1-ին և 36.2-րդ կետերով՝

«36.1. Թողարկողն իրավունք ունի իր կողմից թողարկված պարտատոմսը մինչև մարման ամսաթիվը փոխանակելու շրջանառությունում առկա այլ թողարկման պարտատոմսով:

36.2. Փոխանակման աճուրդին կարող են մասնակցել միայն գործակալները:».

32) N 1 հավելվածի 38-րդ կետում «հաստատված» բառը փոխարինել «սահմանված» բառով.

33) N 1 հավելվածի 42-րդ կետում հանել «տեղաբաշխման և հետգնման» բառերը.

34) N 1 հավելվածի 44-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«44. Գործակալն իր կարգավիճակից կարող է զրկվել թողարկողի որոշմամբ՝ համաձայն պայմանագրի: Կարգավիճակից զրկելու վերաբերյալ որոշման մասին գործակալը, կենտրոնական պահառուն, աճուրդի համակարգի օպերատորը, վերջնահաշվարկ իրականացնողը և օպերատորը տեղեկացվում են որոշման ընդունման պահից մեկ աշխատանքային օրվա ընթացքում: Գործակալի կարգավիճակից զրկելու վերաբերյալ որոշումն ուժի մեջ է մտնում սույն կետում նախատեսված տեղեկացման օրվան հաջորդող օրվանից:».

35) N 1 հավելվածի VI գլուխը «ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԻ» բառից հետո լրացնել «ԳՆՄԱՆ» բառով.

36) N 1 հավելվածի 47-րդ կետը «պարտատոմսերի» բառից հետո լրացնել «գնման» բառով, հանել «(վաճառքի)» բառը.

37) N 1 հավելվածի 48-րդ կետը «պարտատոմսերի» բառից հետո լրացնել «գնման» բառով, «ամբողջ» բառից հետո լրացնել «գնման» բառով, «մաքուր» բառից հետո լրացնել «գնման» բառով.

38) N 1 հավելվածի 2-րդ կետի 20-րդ, 21-րդ, 26-րդ, 30-րդ, 37-րդ, 42-րդ, 46-րդ ենթակետերում, 15-րդ, 17-րդ, 41-րդ, 54-րդ, 58-րդ, 59-րդ և 60-րդ կետերում «և (կամ)» բառերը փոխարինել «կամ» բառով.

39) որոշումը լրացնել նոր՝ N 4 հավելվածով՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

26.04.2024
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ